ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Օգոստոս 2003)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Ցանցային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տնտեսական աճ: 2003 թ. հունվար-օգոստոսին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 114.8%: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում շինարարության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 6.0 տոկոսային կետ), արդյունաբերության (4.7) և ծառայությունների (3.0) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2003 թ. հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 103.4%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թ. օգոստոսին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 2.3%-ով անկում հիմնականում «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Միրգ» և «Ձկնամթերք» ապրանքախմբերի՝ համապատասխանաբար 18.3%, 24.3% և 36.7%-ով անկման հաշվին:

2002 թ. դեկտեմբերի համեմատությամբ գների ընդհանուր մակարդակի անկումը կազմել է 1.4%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի –2.6 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.05 տոկոսային կետը[1], իսկ բնականոն սղաճը՝ 1.17 տոկոսային կետը:

2003 թ. հունվար-օգոստոսին, 2002 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.4%, իսկ օգոստոսին, 2002 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 104.3%:

Արտաքին հատված: 2003 թ. հունվար – օգոստոսին ապրանքների արտահանման ծավալը (FOB գներով) կազմել է 438.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 46.6%-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում արտահանման մեջ շուրջ 54.7% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 12.7% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 61.8 և 91.7% աճով:

Ապրանքների ներմուծման ծավալը (CIF գներով) կազմել է 824.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 42.3%-ով: Ընդ որում, ներմուծման աճը ևս հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ շուրջ 28.1 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ծավալների 108.7% աճով: Շուրջ 15.5%-ով ավելացել են նաև ներմուծման մեջ մոտ 13.7% կազմող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ներմուծման ծավալները:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն աճել է 31.6 %-ով, իսկ ներմուծումը՝ 26.6%-ով:

Արդյունքում, 2003 թ. հունվար – օգոստոսին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 37.8%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ 24.2%-ով) և կազմել 385.6 մլն ԱՄՆ դոլար:

2003 թ. հունվար – օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 584.6 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 2.4%-ով: Օգոստոսի փոխարժեքը կազմել է 578.1 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով շուրջ 0.2%-ով:

Պետական հատված: Օգոստոսին ևս արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշների համեմատությամբ փաստացի ցուցանիշների բարձր կատարողական: Բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 23.2 մլրդ դրամ՝ ծրագրված 22.4 մլրդ դրամի փոխարեն, որում հարկային եկամուտները կազմել են 19.9 մլրդ դրամ՝ ծրագրված 19.1 մլրդ դրամի փոխարեն, իսկ ոչ հարկային ու կապիտալ եկամուտները 0.7 մլրդ դրամ՝ ծրագրված 0.6 մլրդ դրամի փոխարեն: Ստացվել է նաև ծրագրված 2.6 մլրդ դրամի դրամաշնորհը: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 833 մլն դրամ՝ հուլիսի 806 մլն դրամի, հունիսի 872 մլն դրամի և նախորդ տարվա օգոստոսի 788 մլն դրամի դիմաց: Հարկերի անհամաչափ հավաքագրման գործընթացում նկատվում են դրական միտումներ. այսպես, օգոստոսի վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ընթացքում հավաքագրված հարկերի 13.2 %-ը՝ հուլիսի 17.2%-ի և երկրորդ եռամսյակի միջինացված 30.9%-ի դիմաց:

Բյուջեի ծախսերը օգոստոսին կազմել են 20.4 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 20.5 մլրդ դրամի փոխարեն:

---

[1] Սակագների փոփոխությունները պայմանավորված են հիմնականում ներքաղաքային հեռախոսի վարձավճարների աճով՝ կապված 1 րոպե հեռախոսային խոսակցության արժեքի (որը կախված է խոսակցության ընդհանուր ժամանակից և վճարված գումարից) ավելացման հետ:

Արդյունքում, բյուջեի հավելուրդը կազմել է մոտ 2.9 մլրդ դրամ, որը ձևավորվել է հետևյալ աղբյուրների՝ պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 0.3 մլրդ դրամ զուտ մուտքերի, 0.1 մլրդ դրամ՝ սեփականաշնորհման միջոցների, -0.3 մլրդ դրամ՝ արտաքին վարկի մարման և 3.0 մլրդ դրամ՝ միասնական հաշվի միջոցների աճի հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պահանջը ամսվա ընթացքում նվազել է մոտ 3.4 մլրդ դրամով և կազմել 30.8 մլրդ դրամ:

Դրամավարկային քաղաքականություն: Սովորաբար տարվա երկրորդ կեսին, փողի պահանջարկի սեզոնային աճին համահունչ, դրամավարկային ծրագրով նախատեսվում է փողի բազայի ավելացում. ինչպես հուլիսին, օգոստոսին ևս դրամավարկային ծրագրով նախատեսված փողի բազայի ավելացումը հիմնականում ապահովվելու էր ԿԲ ՁԱԱ աճի հաշվին՝ պայմանավորված Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ամսական մասնաբաժնի (5.8 մլրդ դրամ) ստացմամբ: Ընդ որում, նախորդ ամիսների միտումների համաձայն ենթադրվում էր, որ այդ միջոցների շուրջ 20%-ը կրկին դուրս է գալու հանրապետությունից՝ ներմուծման դիմաց վճարումներ կատարելու նպատակով: Միևնույն ժամանակ, ծրագրով նախատեսվում էր նաև ավելի քան 1.0 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում և հիմնականում Կառավարության ավանդային հաշիվների միջոցների ավելացման հետևանքով ԿԲ ՁՆԱ-ի մոտ 600 մլն դրամով նվազում: Արդյունքում, փողի բազան օգոստոսի ընթացքում պետք է աճեր 3.0 մլրդ դրամով և ամսվա վերջին հասներ 104.8 մլրդ դրամի՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքի վերին հատվածում:

Փաստացի արդյունքներով փողի բազայի աճը օգոստոսին զիջել է ծրագրված ցուցանիշը՝ կազմելով 2.0 մլրդ դրամ, թեև ստացվել էր եռամսյակի վերջում ակնկալվող «Պարենային ապահովության ծրագրի» դրամաշնորհը՝ 2.6 մլրդ դրամ ծավալով: Փողի բազայի կառավարման սցենարից շեղումը պայմանավորվել է ՁՆԱ-ի բաղադրատարրերի շարժով: Մասնավորապես, Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը 1.3 մլրդ դրամի փոխարեն նվազել է 3.4 մլրդ դրամով (որպես կանոն, ամսվա վերջին օրերին), ինչը տեղի է ունեցել Գանձապետարանի միասնական հաշվում սպասվածից ավելի միջոցների կուտակման հետևանքով: Վերջինիս մնացորդն ամսվա վերջին հասել է 22.7 մլրդ դրամի՝ ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունների ցուցանիշը հասցնելով -30.8 մլրդ դրամ մակարդակի:

Բանկերի հետ փոխհարաբերություններում շարունակել է ակտիվ գործել մշտական հնարավորության ավանդային գործիքը (ներգրավման համախառն ծավալը կազմել է 6.1 մլրդ դրամ), որին զուգահեռ ԿԲ կողմից կիրառվել են նաև հակադարձ ռեպո համաձայնագրերը՝ շուրջ 1.1 մլրդ դրամ ծավալով: Միաժամանակ, ամսվա ընթացքում «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) վարկային ծրագրի շրջանակներում բանկերին տրամադրվել է 300 մլն դրամի վարկ: Արդյունքում, ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունները նվազել են 756 մլն դրամով և ամսվա վերջին կազմել 6.8 մլրդ դրամ:

ՀՀ ԿԲ ՁԱԱ-ն աճել են 5.9 մլրդ դրամով և ամսվա վերջին մակարդակը հասցրել 144.4 մլրդ դրամի, ինչը տեղի է ունեցել ստացված դրամաշնորհների՝ Լինսի և «Պարենային ապահովության ծրագրի» (համապատասխանաբար 5.5 մլրդ և 2.6 մլրդ դրամ) հաշվին: Վերոնշյալ աճը 810 մլն դրամով չեզոքացվել է արտաքին պարտքի սպասարկման և 1.4 մլրդ դրամով՝ հաճախորդների համար այլ փոխարկումների (գերակշիռ մասը Լինսի դրամաշնորհի միջոցներից ներմուծման նպատակով հանրապետությունից դուրս փոխանցումներն են) հետևանքով:

Ինչպես հուլիսին, օգոստոսին ևս փողի բազայի կառուցվածքում աճն ամբողջությամբ բաժին է ընկել ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկին, ինչը վկայում է, որպես կանոն, տարվա երկրորդ կեսին կանխիկի նկատմամբ պահանջարկի (գործառնական) աճի տեմպերի արագացման մասին: ԿԲ-ից դուրս կանխիկն ամսվա կտրվածքով աճել է 2.6 մլրդ դրամով, որի պարագայում բանկերի թղթակցային հաշիվների միջոցները ԿԲ-ում նվազել են 608 մլն դրամով: Չնայած դրան, որ հետևանք էր առավելապես ամսվա վերջին օրվա կանխիկի ավելի քան 1.2 մլրդ դրամով նվազման, բանկային համակարգում պահպանվել է իրացվելիության ավելցուկի միջին օրական բարձր մակարդակ՝ 3.5 մլրդ դրամ, որն էլ պայմանավորել է ԿԲ-ում ներդրված ավանդների մեծ ծավալները:

Օգոստոսին փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) աճել է 5.1 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 207.4 մլրդ դրամ: Աճի մոտ 1.8 մլրդ դրամը բաժին է ընկել շրջանառությունում գտնվող կանխիկին, իսկ 3.3 մլրդ դրամը՝ ավանդներին: Ընդ որում, վերջինիս կառուցվածքում գերակշռել է արտարժութային ավանդների աճը՝ 3.2 մլրդ դրամ, որի հիմնական մասը տեղի է ունեցել ժամկետային ավանդների աճի հաշվին: Ցպահանջ դրամային ավանդների 447 մլն դրամով նվազման և ժամկետային դրամային ավանդների 526 մլն դրամով ավելացման արդյունքում դրամային ավանդները գրեթե պահպանել են նախորդ ամսվա մակարդակը: Դրամային ավանդների կայուն վարքագծի պարագայում դրամային զանգվածն աճել է առավելապես շրջանառությունում գտնվող կանխիկի՝ 1.8 մլրդ դրամով աճի հաշվին, և ամսվա վերջին կազմել 121.0 մլրդ դրամ:

Շրջանառությունում գտնվող կանխիկի աճի և դրամային ավանդների անփոփոխ մակարդակի պայմաններում դրամային բազմարկիչը փոքր-ինչ նվազել է՝ նախորդ ամսվա 1.17-ից իջնելով 1.16-ի: Ինչ վերաբերում է փողի բազմարկչին, ապա դրա վրա կանխիկի նվազման ուղղությամբ ազդեցությունը չեզո-

քացվել է արտարժութային ավանդների ավելացման արդյունքում, ինչը հանգեցրել է այդ ցուցանիշի աճին՝ նախորդ ամսվա 1.99-ից 2.0:

Ֆինանսական շուկայում օգոստոսին դիտվել են համեմատաբար կայուն միտումներ. տարբեր հատվածներում տոկոսադրույքները պահպանել են նախորդ ամսվա մակարդակները: Մասնավորապես, ՊՊ առաջնային շուկայում տեղաբաշխվել են հիմնականում 9-12-ամսյա պարտատոմսեր, որոնց միջին տարեկան եկամտաբերությունը տատանվել է 10.6%-ի շուրջ, իսկ ՊՊ երկրորդային շուկայում միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 11.7%՝ հուլիսի 11.9%-ի փոխարեն: Բանկերի միջև կնքված ռեպո համաձայնագրերի միջին տարեկան տոկոսադրույքը ևս ցուցաբերել է համեմատաբար կայուն վարքագիծ՝ ամսվա ընթացքում տատանվելով 7%-ի շուրջը:

Հաշվի առնելով վերոնշյալ կայուն միտումները, ինչպես նաև բանկերի կողմից ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների աննշան փոփոխությունները՝ Կենտրոնական բանկն անփոփոխ է թողել բանկային տոկոսի հաշվարկային դրույքը (18%): Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկի խորհուրդը պահպանել է ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների նախորդ ամսվա մակարդակները՝ բացառությամբ ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքի, որը, հաշվի առնելով դրանց և երկրորդային շուկայի տոկոսադրույքների միջև տարբերությունը, իջեցվել է 1 տոկոսային կետով՝ սահմանվելով 9%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար – հուլիս*	*2003 թ. հունվար – հուլիսի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*	*Հունվար – օգոստոս*	*2003 թ. հունվար – օգոստոսի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	668476.9	114.9	823973.2	114.8
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	103.0	-	103.4	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [1]	523.4	115.9	645.0	115.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	228811.5	118.1	265164.0	119.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3188.6	96.6	3651.2	97.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	155004.5	99.7	188871.4	100.1
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	337509.5	113.4	398658.1	113.6
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	85872.9	150.2	109513.9	151.4
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	556784.9	111.1[1]	660887.9	111.8[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	562544.0	111.8[1]	662150.7	111.8[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	30398	115.5[1]	30777	116.4[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1404.2	-	1404.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.0	-	126.7	-
Գործազրկության մակարդակը (%)	9.0	-	9.0	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար – հուլիս*	*2003 թ. հունվար – հուլիսը 2002 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*	*Հունվար-օգոստոս*	*2003 թ. հունվար – օգոստոսը 2002 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	372.9	141.3	438.7	146.6
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	727.0	146.8	824.2	142.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	354.2	152.9	385.6	137.8

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
Ապրիլ	102.0	102.5	100.0	98.3
Մայիս	101.2	108.1	99.9	97.4
Հունիս	101.4	95.0	99.9	81.0
Հուլիս	94.5	103.6	100.0	71.1
Օգոստոս	97.7	97.7	100.0	79.4
2003 թ. հունվար – օգոստոսը 2002 թ. հունվար – օգոստոսի համեմատությամբ	103.4	105.7	100.8	103.2

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5	2.0	4.2
Մայիս	1.6	1.7	1.2	5.4
Հունիս	-1.3	-0.5	1.4	6.8
Հուլիս	-2.7	-5.0	-5.5	1.0
Օգոստոս	-0.7	-3.0	-2.3	-1.4
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

V. Սպառողական գների փոփոխությունները [1]

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ [2]*
	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Հունվար	0.5	0.4	35.5	3.69	0.1	0.01	4.1
Փետրվար	-0.4	-0.3	27.0	2.8	0.1	0.01	2.5
Մարտ	-0.5	-0.4	23.6	2.5	0.1	0.01	2.1
Ապրիլ	0.6	0.5	34.9	3.6	0.2	0.02	4.2
Մայիս	1.0	0.8	43.5	4.6	0.3	0.02	5.4
Հունիս	3.4	2.7	39.2	4.1	0.3	0.03	6.8
Հուլիս	1.8	1.4	-5.3	-0.5	0.7	0.06	1.0
Օգոստոս	1.4	1.2	-24.9	-2.6	0.5	0.05	-1.4


[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք բաղադրիչների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պետական արժեթղթեր	Կենտրոնական բանկի երկարաժամկետ պետական արժեթղթեր	Պետ. արժեթղթերի վերաշուրջ	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ իսկ/փոխարժույթով	ՀՀ տոհմատուն-տեսչ. հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	**-9711**	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	**-12931**	***-12921***
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	**-10362**	***-10366***
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	**-13564**	***-13617***
Ապրիլ	0	1536	0	1536	25125	151	13	0	0	25288	**-23752**	***-23758***
Մայիս	0	1431	0	1431	24004	150	66	0	0	24221	**-22790**	***-22857***
Հունիս	0	1247	0	1247	29655	158	11	0	0	29824	**-28577**	***-28751***
Հուլիս	0	1247	0	1247	28467	160	15	0	0	28642	**-27395**	***-27469***
Օգոստոս	0	1142	0	1142	31759	162	7	0	0	31929	**-30787**	***-30930***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2002			
Դեկտեմբեր	13509	13148	26657
2003			
Հունվար	13953	14828	28781
Փետրվար	16032	12153	28185
Մարտ	15147	15308	30455
Ապրիլ	14720	25288	40009
Մայիս	14495	24221	38716
Հունիս	14692	29824	44516
Հուլիս	12178	28642	40820
Օգոստոս	12146	31929	44075



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ – 03	Փ – 03	Մ – 03	Ա - 03	Մ – 03	Հ – 03	Հ – 03	Օ – 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)									
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***130616***	***124388***	***123570***	***116338***	***130021***	***132499***	***129437***	***138556***	***144427***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-19343***	***-24298***	***-25787***	***-23007***	***-32691***	***-32049***	***-34053***	***-36629***	***-40526***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577	-27395	-30787
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577	-27395	-30787
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0	0	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500	7650	7500	6500	7600	6844
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0	0	-300	-1600	-500	-500
Հակադարձ ռեպո (-)	0	0	-159	0	0	0	0	0	-1056
Զուտ այլ ակտիվներ	-20024	-21009	-20406	-16943	-16589	-16759	-11976	-16834	-16583
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***	***97003***	***101528***	***98863***	***102793***	***105425***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***	***97330***	***100450***	***95384***	***101927***	***103901***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965	76782	80450	79967	86329	88901
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920	20079	19590	14992	15229	14621
Այլ հաշիվներ	356	375	411	446	469	410	425	369	378
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-6228***	***-818***	***-7232***	***13683***	***2478***	***-3062***	***9119***	***5871***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-4955***	***-1489***	***2780***	***-9684***	***642***	***-2004***	***-2576***	***-3897***
Կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787	1182	-3392
Կենտրոնական կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787	1182	-3392
Բանկեր	-	-750	-4661	2519	150	-150	-1000	1100	-756
այդ թվում՝ ավանդներ (-)	-	750	1610	-2360	0	300	1300	-1100	0
Զուտ այլ ակտիվներ	-	-985	603	3463	354	-170	4783	-4858	251
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-7141***	***-2371***	***-3933***	***2133***	***4525***	***-2664***	***3930***	***2632***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-11183***	***-2307***	***-4452***	***3999***	***3120***	***-5066***	***6543***	***1974***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-14332	817	-608	-1183	3668	-483	6362	2572
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	3130	-3160	-3879	5159	-489	-4598	237	-608
Այլ հաշիվներ	-	19	36	35	23	-59	15	-56	9
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***4.8***	***-0.7***	***-5.9***	***11.8***	***1.9***	***-2.3***	***7.0***	***4.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***25.6***	***6.1***	***-10.8***	***42.1***	***-2.0***	***6.3***	***7.6***	***10.6***
Կառավարություն	-	33.2	-19.9	30.9	75.1	-4.1	25.4	-4.1	12.4
Բանկեր	-	7.2	-48.3	50.6	2.0	-2.0	-13.3	16.9	-9.9
Զուտ այլ ակտիվներ	-	4.9	-2.9	-17.0	-2.1	1.0	-28.5	40.6	-1.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-6.6***	***-2.3***	***-4.0***	***2.2***	***4.7***	***-2.6***	***4.0***	***2.6***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-10.1***	***-2.3***	***-4.6***	***4.3***	***3.2***	***-5.0***	***6.9***	***1.9***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-15.6	1.1	-0.8	-1.5	4.8	-0.6	8.0	3.0
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	16.6	-14.4	-20.6	34.6	-2.4	-23.5	1.6	-4.0
Այլ հաշիվներ	-	5.3	9.6	8.5	5.2	12.6	3.7	-13.2	2.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՀ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՀ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ - 03	Հ - 03	Օ - 03
ՋԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**	**23970**	**25678**	**30573**	**28225**	**29269**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790	78023	83379	87298	82280	80566
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028	-51467	-55854	-54151	-51171	-48225
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095	-2586	-1848	-2574	-2883	-3072
ՋՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**	**91841**	**92764**	**87365**	**91206**	**93498**
Կառավարություն	10569	10626	9140	11246	11580	12478	13937	17231	18743
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943	11855	11680	8315	10478	11208
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895	22858	22884	19879	18633	19720
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951	-11002	-11204	-11563	-8155	-8512
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719	88957	92333	92585	91211	91972
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57647	56514	55822	57148	56934	55402	56706
Դրամով	15414	14356	14949	15137	14357	17322	17630	18046	19952
Արտարժույթով	43675	43211	39497	38365	38896	37589	37457	35884	35608
Արժեթղթեր	4130	3495	3201	3013	2569	2237	1847	1472	1147
Տնային տնտեսություններ	26219	23523	24377	26083	27899	29662	30626	30080	30471
Դրամով	4353	4261	4289	4495	4655	4,740	5120	5284	5714
Արտարժույթով	21866	19262	20088	21589	23244	24922	25505	24796	24757
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20	16	17
Դրամով	64	64	64	62	67	66	6	6	6
Արտարժույթով	0	7	13	13	22	19	15	11	11
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943	5043	5393	4961	5677	4742
Դրամով	-	3286	3077	3378	3744	4195	3889	1598	1101
Արտարժույթով	-	1621	1393	1565	1299	1199	1072	4079	3641
Այլ ռեզիդենտներ[5]	4492	0	8	104	104	45	45	36	36
Դրամով	3116	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	1376	0	8	104	104	45	45	36	36
Ջուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483	-20551	-23728	-27472	-27713	-28426
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946	861	894	1345	1448	2249
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571	1237	3043	1546	2564	2042	1823
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496	-229	-160	-269	-912	-182	-525
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224	455	455	505	491	486
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124	3561	3129	3924	4640	4748
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767	30178	30110	31570	28487	29444
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747	-3353	-2941	-3580	-4324	-4327
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479	-741	-770	-777	-770	-689
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258	-45427	-45434	-46478	-50672	-51560
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068	-8968	-10448	-15634	-8872	-10075
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**	**115811**	**118442**	**117938**	**119432**	**122767**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321	34269	38517	37150	35881	35991
Ցպահանջ ավանդներ	25682	21580	21953	20163	23030	24693	23309	23417	22982
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158	11239	13824	13841	12464	13009
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773	81542	79924	80789	83551	86776
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126	37444	35902	37517	39680	40211
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231	43670	43579	42841	43433	46144
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415	429	443	431	438	421

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

[5] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ – 03	Հ - 03	Օ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)									
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***	***153991***	***158177***	***160010***	***166781***	***173696***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***	***36181***	***37567***	***34833***	***36207***	***34414***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317	-12172	-10311	-14641	-10165	-12044
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739	88974	92350	92603	91233	92004
Ձեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618	55926	57193	56979	55438	56742
որից՝ կուտակված տոկոսներ	1041	933	925	961	930	959	1009	528	569
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103	27916	29679	30643	30102	30503
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525	489	523	540	549	555
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20	16	17
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [6]	0	4907	4469	4943	5043	5393	4961	5677	4742
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62	84	64	70	33	38
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085	-40621	-44472	-43130	-44861	-45546
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [7]	***123897***	***107407***	***107600***	***106323***	***108378***	***115539***	***113808***	***119148***	***120996***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***	***189493***	***195021***	***194166***	***202289***	***207400***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [8]	***203138***	***185202***	***185434***	***183342***	***190172***	***195744***	***194843***	***202988***	***208110***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801	73890	76892	76479	83187	84965
Ցպահանջ ավանդներ [9]	26036	21954	22351	20608	23499	25103	23734	23758	23311
կուտակված տոկոսներ	144	21	28	26	31	46	34	39	48
Ժամկետային խնայ. և արտարժ. ավանդ.	88546	88267	87560	87932	92782	93748	94629	96042	99834
կուտակված տոկոսներ	406	579	618	633	648	677	643	660	662
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	79038	77572	77582	76774	81543	79924	80789	83578	86825
Ցպահանջ	36854	34178	34593	33126	37445	35902	37517	39707	40260
Ժամկետային	41836	43014	42594	43231	43670	43579	42841	43433	46144
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415	429	443	431	438	421
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***	***12986***	***4186***	***1833***	***6771***	***6915***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***	***-6156***	***1386***	***-2734***	***1375***	***-1793***
Կառավարություն		-3268	1083	-1095	-9855	1861	-4330	4476	-1879
Տնտեսություն		-4432	-2988	1143	1235	3376	253	-1370	771
Ձեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037	-692	1267	-214	-1541	1304
որից՝ կուտակված տոկոսներ		-108	-8	36	-31	29	50	-481	41
Տնային տնտեսություններ		-2699	852	1708	1813	1763	964	-541	401
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13	-36	34	17	9	6
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2	14	-4	-65	-4	1
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474	100	350	-432	716	-935
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5	22	-20	6	-37	5
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798	2464	-3851	1343	-1732	-685
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ		***-16490***	***193***	***-1277***	***2055***	***7161***	***-1732***	***5341***	***1848***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***	***6810***	***5528***	***-855***	***8123***	***5111***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ		***-17936***	***232***	***-2092***	***6830***	***5572***	***-901***	***8145***	***5122***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722	-911	3002	-413	6708	1778
Ցպահանջ ավանդներ		-4082	397	-1743	2891	1604	-1369	24	-447
կուտակված տոկոսներ		-123	7	-2	5	15	-12	5	9
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372	4850	966	881	1413	3792
կուտակված տոկոսներ		173	39	15	15	29	-34	17	2
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808	4769	-1619	865	2789	3247
Ցպահանջ		-2676	415	-1467	4319	-1543	1615	2190	553
Ժամկետային		1178	-420	637	439	-91	-738	592	2711
Արտարժույթով ավանդների կուտակ. տոկոսներ		31	16	21	14	14	-12	7	-17

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ՔՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-6.1***	***3.0***	***-2.0***	***9.2***	***2.7***	***1.2***	***4.2***	***4.1***
ՔՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-16.2***	***-8.7***	***2.0***	***-14.5***	***3.8***	***-7.3***	***3.9***	***-5.0***
Կառավարություն		-339.4	-47.0	89.6	425.3	-15.3	42.0	-30.6	18.5
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3	1.4	3.8	0.3	-1.5	0.8
Ձեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8	-1.2	2.3	-0.4	-2.7	2.4
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0	6.9	6.3	3.2	-1.8	1.3
Հասարակական կազմակերպություններ		10.9	8.5	-2.6	18.7	-4.5	-76.5	-20.0	6.3
Այլ ֆինանսական կազմակերպություններ		100.0	-8.9	10.6	2.0	6.9	-8.0	14.4	-16.5
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8	-5.7	9.5	-3.0	4.0	1.5
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [7]		***-13.3***	***0.2***	***-1.2***	***1.9***	***6.6***	***-1.5***	***4.7***	***1.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-8.9***	***0.1***	***-1.1***	***3.7***	***2.9***	***-0.4***	***4.2***	***2.5***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [8]		***-8.8***	***0.1***	***-1.1***	***3.7***	***2.9***	***-0.5***	***4.2***	***2.5***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0	-1.2	4.1	-0.5	8.8	2.1
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8	14.0	6.8	-5.5	0.1	-1.9
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4	5.5	1.0	0.9	1.5	3.9
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0	6.2	-2.0	1.1	3.5	3.9
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2	13.0	-4.1	4.5	5.8	1.4
Ժամկետային		2.8	-1.0	1.5	1.0	-0.2	-1.7	1.4	6.2

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ՋԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՋԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՋԱԱ-ն փաստացի փոխարժեքով:

[3] ԿԲ-ի ՋԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի=349.3 ԱՄՆ դոլար:

[4] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[5] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[6] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[7] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[8] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[9] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2002	88556	25892	114448	9449	123897	78691	202588
2003							
Հունվար	74980	21933	96914	10494	107408	77194	184602
Փետրվար	75523	22323	97846	9754	107600	77188	184788
Մարտ	74801	20582	95383	10940	106323	76359	182682
Ապրիլ	73890	23468	97358	11020	108378	81114	189492
Մայիս	76892	25057	101949	13590	115539	79481	195020
Հունիս	76479	23700	100179	13629	113808	80358	194166
Հուլիս	83187	23719	106906	12242	119148	83140	202289
Օգոստոս	84965	23263	108228	12768	120996	86404	207400


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):

[4] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[5] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն դրամ
114500
111000
107500
104000
100500
97000
93500
90000
07.01.03
14.01.03
21.01.03
27.01.03
04.02.03
11.02.03
16.02.03
22.02.03
28.02.03
10.03.03
17.03.03
24.03.03
29.03.03
03.04.03
10.04.03
17.04.03
25.04.03
02.05.03
12.05.03
19.05.03
26.05.03
2.06.03
9.06.03
16.06.03
23.06.03
30.06.03
07.07.03
14.07.03
21.07.03
28.07.03
05.08.03
12.08.03
19.08.03
26.08.03
31.08.03
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
15000
0
99 00
01
02
03
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
300000
250000
200000
150000
100000
50000
0
99 00
01
02
03
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը




Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2002	2003								
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ
Կենտրոնական բանկի ՋԱԱ	130616	124388	123570	116338	130021	132499	129437	138556	144427
Առևտրային բանկերի ՋԱԱ	18286	15367	20373	24667	23970	25678	30573	28225	29269
Ընդամենը	148902	139755	143944	141005	153991	158177	160010	166781	173696
Կենտրոնական բանկի ՋԱԱ[3]	***131168***	***125064***	***124292***	***117131***	***130751***	***133131***	***130075***	***139402***	***145286***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:
[2] ՋԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՋԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ՋԱԱ-ն փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
1997	44434	32265	38834	41809	66877
1998	47325	35504	46352	51535	90930
1999	47337	36569	45926	50415	103337
2000	63631	51052	62812	68716	143374
2001	70644	55816	67974	74724	149797
2002	97809	76000	100884	110969	192868
2003					
Հունվար	102604	75141	97741	108861	184456
Փետրվար	102879	79241	104165	113375	191036
Մարտ	98040	77913	101420	111656	186172
Ապրիլ	101638	77628	103055	113471	198658
Մայիս	104163	80528	106122	119157	201418
Հունիս	99945	80150	104275	117911	199269
Հուլիս	102036	83124	106649	119521	202645
Օգոստոս	102625	84777	106290	119926	203439

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:

Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: ՀՀ ԿԲ տեղեկագրի սույն համարում փողի ագրեգատների թվային շարքերը վերանայված են և հարթեցումների համար հիմք են ընդունված 1997 - 2002 թթ. շարքերը, քանի որ 1995 և 1996 թթ. շարքերը չեն համապատասխանում ընդհանուր միտումներին:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001 [3]	2002 [4]	2003							
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	431.3	420.0	417.8	403.6	440.0	453.6	441.2	455.1	457.4
Համախառն միջազգային պահուստներ	333.2	441.7	430.4	428.2	413.2	448.9	461.1	448.7	462.8	464.9
Ոսկի	12.4	15.7	16.3	15.9	14.9	14.9	16.2	15.4	16.1	16.7
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	30.1	26.2	26.1	26.0	23.6	24.2	20.1	18.0	15.4
Արտարժույթ [2]	310.6	395.9	387.8	386.3	372.2	410.4	420.7	413.2	428.7	432.9
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [5]	***331.2***	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***	***441.7***	***455.3***	**442.9**	**456.8**	**459.1**


[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[5] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003							
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ
Վարկեր [1]										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7	17.5	24.2	20.1	28.8	27.3
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2	22.7	14.6	26.4	18.1	18.6
Ֆիզիկական անձանց										
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2	25.3	17.5	26.8	27.1	27.2
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9	34.6	34.9	34.3	33.5	33.2
Ավանդներ [1]										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9	8.0	7.8	5.5	8.7	9.3
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7	3.0	2.3	5.6	3.2	4.7
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8	8.2	9.2	6.7	5.7	6.5
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0	6.0	6.4	6.6	6.0	6.6
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0	9.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5	14.7	13.5	11.8	10.6	10.6
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5	2.0	1.2	1.4	-5.5	-2.3

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ
1	-	-	-	-	589.02	-	-	584.43	573.76
2	585.81	-	-	-	588.56	586.70	585.27	584.81	-
3	585.81	-	585.46	588.85	588.56	-	585.27	584.51	-
4	586.51	-	584.65	588.99	588.43	-	585.00	584.10	573.76
5	586.51	-	585.52	-	-	586.51	585.00	-	573.28
6	586.15	-	584.70	588.99	-	586.51	585.00	-	574.75
7	-	585.10	586.00	588.85	588.21	587.18	-	583.81	574.88
8	-	586.63	-	-	588.00	587.18	-	584.03	576.91
9	586.44	579.03	-	-	588.89	-	584.74	583.51	-
10	586.79	582.48	586.41	589.25	589.03	-	584.59	583.02	-
11	586.92	-	586.10	589.88	588.88	-	584.94	583.02	576.91
12	586.92	-	585.89	590.23	-	586.67	585.07	-	577.48
13	586.35	582.48	586.23	590.93	-	587.13	585.07	-	577.48
14	-	582.48	585.81	591.53	588.69	586.60	-	582.52	577.48
15	-	582.17	585.81	591.53	588.11	586.73	-	581.96	578.29
16	585.51	581.00	585.81	591.53	588.31	586.12	585.42	580.49	-
17	585.15	582.00	585.96	591.76	588.23	-	585.12	579.03	-
18	584.88	-	585.96	591.76	588.01	-	585.48	577.52	578.46
19	584.00	-	-	591.76	-	585.96	585.48	-	578.46
20	582.52	582.00	586.21	591.61	-	585.80	585.48	-	578.86
21	582.52	582.00	586.56	591.51	587.54	585.38	-	576.40	579.12
22	-	582.00	586.56	-	587.67	585.33	-	575.72	580.56
23	582.16	582.25	-	-	587.67	585.11	585.97	574.97	-
24	582.16	584.00	587.36	591.22	-	-	585.74	574.61	-
25	582.22	584.00	587.70	590.64	587.54	-	585.54	574.48	579.96
26	582.00	-	587.81	590.55	587.54	585.00	585.10	-	580.59
27	582.20	584.23	588.12	590.23	-	584.45	585.16	-	581.30
28	582.20	-	588.46	589.52	587.37	-	585.16	574.48	581.21
29	583.65	584.44	-	589.52	587.15	584.69	585.16	574.14	581.21
30	584.89	584.64	-	589.52	587.01	585.04	584.80	574.00	581.21
31	-	584.73	-	589.52	-	585.04	-	574.00	581.21
ժամանակահատվածի վերջ	584.89	584.73	588.46	589.52	587.01	585.04	584.80	574.00	581.21
ժամանակահատվածի միջին	584.59	583.03	586.32	590.40	588.11	585.96	585.20	579.55	578.14





ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

ժամկետ		1-3 ամիս[2] (ներառյալ 91-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2003	Օգոստոս	-	-	-	-	-	-

ժամկետ		3-6 ամիս[2] (ներառյալ 182-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	500.0	14.7	14.7	14.7	0.0	19.3
	Ապրիլ	700.0	13.6	13.6	13.6	0.0	10.0
2003	Օգոստոս	-	-	-	-	-	-

ժամկետ		6-9 ամիս[2] (ներառյալ 273-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	700.0	14.5	14.5	14.5	0.0	18.1
	Փետրվար	800.0	13.9	13.9	13.9	0.0	17.4
	Մարտ	600.0	12.8	12.8	12.8	0.0	7.4
	Ապրիլ	500.0	12.5	12.5	12.5	0.0	8.5
	Հունիս	700.0	15.1	15.1	15.1	0.0	11.6
	Օգոստոս	1110.3	15.3	15.2	15.3	0.1	5.8
	Նոյեմբեր	500.0	15.1	15.1	15.1	0.0	10.8
2003	Հունվար	600.0	14.9	14.9	14.9	0.0	22.4
	Փետրվար	1100.0	12.7	12.2	13.3	0.8	18.8
	Մայիս	600.0	14.0	14.0	14.0	0.0	10.3
	Օգոստոս	700.0	10.3	10.3	10.3	0.0	-3.6

ժամկետ		9-12 ամիս[2] (ներառյալ 364-օրյա)					
